ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի մոտ կայացած Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան

08 նոյեմբերի 2017թ.
ժամը 14[30]

Մասնակցում են

Լ. Մկրտչյան	ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)
Է. Տարասյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Ա. Գալստյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Գ. Գևորգյան	ՀՀ ֆինանսների նախարարի օգնական
Ս. Ալոյան	«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ (համաձայնությամբ)
Ա. Գյումիշյան	«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն (համաձայնությամբ)
Ա. Բախշյան	«Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական (համաձայնությամբ)
Թ. Ավակյան	«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)

Բացակա է

Հ. Այվազյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար

Հրավիրված է

Տ.Հակոբյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1

ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածության քննարկում:

Զեկուցող՝ Լ.Մկրտչյան

Խորհուրդը հաստատեց ՕՐԱԿԱՐԳԸ՝

Քննարկելով ներկայացված հարցը Խորհուրդը

Միաձայն **ՈՐՈՇԵՑ՝**

1. Հավանություն տալ Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածությանը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելուն:
2. Համաձայն «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում նշանակելու համար Ալեքսանդր Շագաֆյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

ՀՀ կրթության և գիտության նախարար
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության տեսչական մարմնի
խորհրդի նախագահ՝ Լ.Մկրտչյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարի տեղակալ, խորհրդի անդամ Է. Տարասյան

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի
վարչության պետի պաշտոնակատար, խորհրդի անդամ Ա. Գալստյան

ՀՀ ֆինանսների նախարարի օգնական, խորհրդի անդամ Գ. Գևորգյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր
նախագահ (համաձայնությամբ), խորհրդի անդամ Ս. Ալոյան

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի
փոխտնօրեն (համաձայնությամբ), խորհրդի անդամ Ա. Գյումիշյան

«Հանրային դիվանագիտություն» հասարակական
կազմակերպության նախագահի կրթության հարցերով
խորհրդական (համաձայնությամբ), խորհրդի անդամ Ա. Բախշյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական
հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն
(համաձայնությամբ), խորհրդի անդամ Թ. Ավակյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) խորհրդի նիստ

ք. Երևան

24 նոյեմբերի 2017

ՀՀ ԿԳՆ-ում կայացավ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին՝

Լ. Մկրտչյան ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Ա. Գալստյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար

Գ. Գևորգյան ՀՀ ֆինանսների նախարարի օգնական

Հ. Այվազյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի ղեկավար

Ս. Ալոյան «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ (համաձայնությամբ)

Ա. Գյումիշյան «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն (համաձայնությամբ)

Թ. Ավագյան «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)

Ա. Բախշյան «Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի նախագահի կրթության հարցերով խորհրդական (համաձայնությամբ)

Բացակա էր՝

Է. Տարասյանը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Հրավիրված էին՝

Տ. Հակոբյանը ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի փորձագետ

Ա. Ասոյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի փորձագետ

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի աշխատողների թվաքանակի հաստատում:

Զեկուցող՝ Ա. Շագաֆյան

Խորհրդի նիստը բացեց խորհրդի նախագահ Լ. Մկրտչյանը և առաջարկեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավար Ա. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցը:

Ա. Շագաֆյանը խորհրդի քննարկմանը ներկայացրեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ աշխատողների թվաքանակը բաղկացած 42 հաստիքից, որից 3-ը՝ հայեցողական, 34-ը ՝ քաղաքացիական ծառայողներ , ԿՏՄ ղեկավարի թվով 1 խորհրդական և 4 հոգի սպասարկող անձնակազմ:

Ա. Շագաֆյանը նաև ներկայացրեց ԿՏՄ յուրաքանչյուր ստորաբաժանումում նախատեսված հաստիքների թիվը: Ըստ այդմ ԿՏՄ հանրակրթության վարչությունում առաջարկվում է ունենալ 11 հաստիք, նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունում՝ 7, ռիսկի գնահատման,

ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունում՝ 7, որակի ապահովման բաժնում՝ 4, իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնում՝ 3 և հանրային կապերի բաժնում 2 հաստիք:

Արտահայտվեցին.

Հ. Այվազյանը առաջարկեց որակի ապահովման բաժնի 4 հաստիքը դարձնել 3 և ավելացած մեկ հաստիքը տեղափոխել հանրակրթության վարչություն:

Ս. Ալոյանը ԿՏՄ ղեկավարին առաջարկեց միառժամանակ անց կառույցի հիմնական անելիքների, սպասարկվող հաստատությունների և առկա խնդիրների մասին ներկայացում անել խորհրդի համար, որպիսի խորհրդի յուրաքանչյուր արդամ իր համար ավելի լավ պատկերացում ունենա թե ինչով և ինչպես ավելի օգտակար կարող է լինել կառույցին:

Ա. Բախշյանը, Գ. Գևորգյանը և Ա. Գյումիշյանը հետաքրքրվեցին թե ինչ կարգով և չափանիշներով են լրացվելու հիմնական հաստիքները:
Ա. Բախշյանին նաև հետաքրքրում էր արդյոք կուսակցական պատկանելիությունը դեր խաղալու է կադրերի ընտրության փուլում:

Հ. Այվազյանը և Ա. Շագաֆյանը համապատասխանաբար պարզաբանեցին, որ հիմնական հաստիքները լրացվելու են քաղաքացիական ծառայության մասին օրենքին համապատասխան, և կուսակցական պատկանելիությունը որևէ դեր չի կարող խաղալ: Մասնավորապես ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության լուծարումից հետո կառույցի քաղաքացիական ծառայողներն օրենքով սահմանված կարգով անցնելու են քաղաքացիական ծառայության ռեզերվ,

որտեղից սակայն ժամանակավոր պայմանագրերով հնարավոր կլինի համապատասխան պաշտոնների նշանակումներ անել մինչև քաղաքացիական ծառայության մրցույթների անցկացումը:

Հ. Այվազյան ավելացրեց, որ խորհուրդը պետք է հաստատի ԿՏՄ քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրերը, ԿՏՄ ստորաբաժանումների ներքին կանոնադրությունները, հնարավորություն ունի քաղծառայության քննության հարցաթերթիկները վերանայելու:

Լ. Մկրտչյանը առաջարկեց խորհրդին կարգ սահմանել և հնարավորություն ստեղծել, որ տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ այդ թվում հասարակական, պետական և մասնագիտական ոլորտներից, ցանկության դեպքում, կարողանան ներկա լինել ԿՏՄ խորհրդի նիստերին:

Ս. Ալոյանն առաջարկեց նաև դիտարկել խորհրդի ֆորմալ և ոչ ֆորմալ նիստերն անցկացնել արտագնա, չեզոք տարածքներում:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ ԿՏՄ 42 հոգուց բաղկացած աշխատողների թիվը,
2. Հետագա նիստերը հնարավորության դեպքում անցկացնել օրվա երկրորդ կեսին,
3. Խորհրդի նիստերի ծանուցումները կատարել սահմանված կարգով և ժամանակահատվածում,
4. Մինչև ԿՏՄ վերջնական ձևավորումը խորհրդի նիստի արձանագրության նախագիծը շրջանառել խորհրդի անդամների շրջանում էլ. փոստի միջոցով՝ արձանագրության տեքստի վերաբերյալ ստանալու խորհրդի անդամների հաստատումը և/կամ դիտողություններն, առաջարկությունները:

ՀՀ կրթության և գիտության նախարար,
խորհրդի նախագահ Լ. Մկրտչյան

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար, խորհրդի անդամ

Ա. Գալստյան

ՀՀ ֆինանսների նախարարի օգնական,
խորհրդի անդամ

Գ. Գևորգյան

ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի ղեկավար, խորհրդի անդամ

Հ. Այվազյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ,
խորհրդի անդամ

Ս. Ալոյան

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն,
խորհրդի անդամ

Ա. Գյումիշյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավագյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի նախագահի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի (ԿՏՄ) խորհրդի նիստ

ք. Երևան 19 դեկտեմբերի 2017

ՀՀ ԿԳՆ-ում կայացավ ՀՀ ԿԳՆ ԿՏՄ խորհրդի հերթական նիստը:

Մասնակցում էին՝

Լ. Մկրտչյան ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)

Է. Տարասյան ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Ա. Գալստյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար

Գ. Գևորգյան ՀՀ ֆինանսների նախարարի օգնական

Հ. Այվազյան ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի ղեկավար

Ա. Գյումիշյան «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն (համաձայնությամբ)

Թ. Ավագյան «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն (համաձայնությամբ)

Բացակա էին՝

Ս.Ալոյան «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ (համաձայնությամբ)

Ա.Բախշյան «Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի նախագահի կրթության հարցերով խորհրդական (համաձայնությամբ)

Հրավիրված էր՝

Տ. Հակոբյանը ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի փորձագետ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ ԿԳՆ ԿՏՄ քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի նախագծերի քննարկում և հաստատում
2. ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ստորաբաժանումների ներքին կանոնադրություններինախագծերի քննարկում և հաստատում
3. ՀՀ ԿԳՆ ԿՏՄ տարեկան պահպանման ծախսերի նախահաշվի քննարկում և հաստատում
4. Այլ հարցեր:

Զեկուցող՝ Ա. Շագաֆյան

Խորհրդի նիստը բացեց խորհրդի նախագահ Լ. Մկրտչյանը և առաջարկեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ղեկավար Ա. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցերը:

Օրակարգային առաջին հարցով Ա.Շագաֆյանը խորհրդի քննարկմանը ներկայացրեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ քաղաքացիական ծառայության պաշտոնների

անձնագրերի նախագծերը, որոնք կազմվել են ըստ քաղաքացիական ծառայության մասին օրենքի պահանջների և ՀՀ ԿԳՆ ԿՏՄ խորհրդի կողմից հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկի:

Հ.Այվազյանը ներկայացրեց մի շարք դիտարկումներ և առաջարկություններ: Մասնավորապես Որակի ապահովման բաժնի մասնագետների պաշտոնների անձնագրերում «Գիտելիքներ և հմտություններ» գլխում կրթության և մասնագիտացումների պահանջը չսահմանափակել *«Իրավագիտություն», «Կրթություն» կամ «Հումանիտար-սոցիալական մասնագիտություններ» կամ հասարակագիտական այլ մասնագիտություններով,* փոխարենը կրթական և մասնագիտական ավելի լայն շրջանակ նախատեսել: Որակի ապահովման բաժնի պետի «Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը» գլխի 6րդ կետի 2րդ ենթակետը վերաձևակերպել հետևյալ կերպ՝ *կատարում է խորհրդի հանձնարարականները, իսկ քաղաքացիական ծառայության մասով՝ Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականները:*

Հ.Այվազյանը առաջարկեց վերանայել նաև կառույցի Հանրային կապերի բաժնի պետի պաշտոնի անձնագրի «Աշխատանքի կազմակերպման և բաժնի ղեկավարման պատասխանատվությունը» գլխի 5րդ կետը՝ *«Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալներից մեկը»,* այն տրամաբանությամբ, որ ստորադաս պաշտոնյայի բացակայության պատճառով վիջինիս պարտականությունները չդրվի վերադաս պաշտոնյայի վրա:

Ա. Շագաֆյանը պարզաբանեց, որ սույն լուծումը տրվել է այն պատճառով, որ տվյալ բաժնում կառույցն ունի ընդհամենը 2 հաստիք՝ բաժնի պետ և առաջին կարգի մասնագետ: Վերջինիս վրա այդ պարտականությունը դնել հնարավոր չէ, քանի որ ըստ քաղաքացիական ծառայության կարգավորումների առաջին կարգի մասնագետը որոշում կայացնելու լիազորություն չունի:

Լ.Մկրտչյանն առաջարկեց այդ պատրականությունը սահմանել մեկ այլ ստորաբաժանման ղեկավարի համապատասխան պաշտոնի անձնագրում, օրինակ՝ Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնի պետի:

Ա. Շագաֆյանը խորհրդին զեկուցեց, որ կառույցի Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն

պետի, պետի տեղակալի և գլխավոր մասնագետների պաշտոնների անձնագրերի նախագծերում «Գիտելիքներ և հմտություններ» գլխում անգլերեն լեզվի ազատ տիրապետումը պատրաստիր պայման է սահմանվել: Համապատասխան պաշտոնյաների համար անգլերենի ազատ տիրապետելու տրամաբանությունը այն է, որ մասնագիտական հասանելի գրականության գերակշռող մասը հենց այդ լեզվով է: Ա. Շագաֆյանը միաժամակ հավելեց, որ պաշտոնների անձնագրերի կազմման փուլում նշված պահանջը որոշ մտավախությունների տեղիք է տվել: Մասնավորապես նշվել է, որ վերջինիս կիրառմամբ հնարավոր է խնդիր ունենալ որակյալ կադրերի ընտրության հարցում:

Հ.Այվազյանը պնդեց, որ առնվազն վարչության պետի և ցանկալի է նաև պետի տեղակալի մասով այդ պահանջը պահպանվի:

Թ.Ավագյանը ևս կարևորեց անգլերենի լավ իմացության նշանակությունն ելնելով «Դասավանդիր Հայաստան»-ի փորձից:

Լ.Մկրտչյանն առաջարկեց վարչության պետի մասով անգլերեն լեզվի ազատ տիրապետման պահանջը պահել նույնը, պետի տեղեկալի մասով սահմանել անգլերեն կամ այլ օտար լեզվի ազատ տիրապետում, օրինակ՝ ռուսերեն, իսկ գլխավոր մասնագետների պարագայում սահմանափակումներ չդնել և առաջնորդվել քաղաքացիական ծառայության օրենքի ընդհանուր կարգով:

Խորհրդի մյուս անդամները տվեցին իրենց համաձայնությունը, Ա.Շագաֆյանը համապատասխան պաշտոնների անձնագրերի նախագծերում կատարեց առաջարկված փոփոխությունները:

Օրակարգային երկրորդ հարցով Ա.Շագաֆյանը խորհրդին ներկայացրեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ստորաբաժանումների ներքին կանոնադրությունների նախագծերը, որոնք կազմվել են Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենքի, ՀՀ ԿԳՆ կրթության տեսչական մարմնի կանոնադրության հիմքի վրա: Հաշվի է առնվել նաև տեսչական այլ մարմինների նմանատիպ ստորաբաժանումների արդեն իսկ հաստատված կանոնադրությունները:

Օրակարգային երրորդ հարցով զեկուցողը խորհրդին ներկայացրեց ՀՀ ԿԳՆ ԿՏՄ տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը՝ ծախսային հիմնական տողերով:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ ԿՏՄ քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի նախագծերը համապատասխան փոփոխություններով,
2. Հաստատել ՀՀ ԿԳՆ ԿՏՄ ներքին ստորաբաժանումների կանոնադրությունների նախագծերը,
3. Հաստատել ՀՀ ԿԳՆ ԿՏՄ տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը:

ՀՀ կրթության և գիտության նախարար,
խորհրդի նախագահ

Լ. Մկրտչյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ,
խորհրդի անդամ

Է. Տարասյան

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար, խորհրդի անդամ

Ա. Գալստյան

ՀՀ ֆինանսների նախարարի օգնական,
խորհրդի անդամ

Գ. Գևորգյան

ՀՀ կառավարության աշխատակազմի տեսչական բարեփոխման խմբի ղեկավար, խորհրդի անդամ

Հ. Այվազյան

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի փոխտնօրեն, խորհրդի անդամ

Ա. Գյումիշյան

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ

Թ. Ավագյան